ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ

ք. Երևան, Նալբանդյան 104

«12» 11 2025թ. N 20/744

«ՎԻ ԷՍ ՏԻ ՍՔԱՅ» ՍՊԸ-ի տնօրեն՝
Վ. Սիմոնյան,
ՀՎՀՀ 08430756
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ. Աստղաձոր 24փ, տ 1

Հարգելի՛ պարոն Սիմոնյան

ՀՀ ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ Գնորդ) և «ՎԻ ԷՍ ՏԻ ՍՔԱՅ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Վաճառող) (ՀՎՀՀ 08430756, գործունեության հասցե՝ Գեղարքունիքի մարզ, գ. Աստղաձոր 24փ, տ 1) միջև 10.07.2025 թվականին կնքվել է «ՀՀ ԱԱԾ-ՏԱԼԿԿԳՎ-ԷԱՃԱՊՁԲ-25/1-ՀՑՀՍ-3» ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), համաձայն որի՝ Վաճառողը ստանձնել է Պայմանագրի N 5 չափաբաժնով՝ 11,399,998.30 (տասնմեկ միլիոն երեք հարյուր իննսունինը հազար ինը հարյուր իննսունութ դրամ երեսուն լումա) ՀՀ դրամ ընդհանուր գումարի 230 հատ համակարգչային մոնիտորի և N 10 չափաբաժնով՝ 10,923,599.75 (տասը միլիոն ինը հարյուր քսաներեք հազար հինգ հարյուր իննսունինը դրամ յոթանասունհինգ լումա) ՀՀ դրամ ընդհանուր գումարի 35 հատ դյուրակիր համակարգիչների մատակարարման պարտավորությունները (այսուհետ՝ Ապրանք)՝ Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրի և N 2 հավելվածով սահմանված մատակարարման ժամանակացույցի պահանջներին համապատասխան:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը՝ Պայմանագրի N 2 հավելվածով սահմանված մատակարարման ժամանակացույցին համապատասխան:

Պայմանագրի 2.4.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել Ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

Պայմանագրի 8.15 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով:

Ապրանքի մատակարարման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո Գնորդի և Վաճառողի միջև սահմանված կարգով 30.07.2025թ.-ին կնքվել է Պայմանագրի

թիվ 1 համաձայնագիրը՝ «11/343-2025», որի համաձայն Պայմանագրով նախատեսված Ապրանքը Վաճառողի կողմից Գնորդին պետք է մատակարարվեր համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 21 օրացուցային օրվա ընթացքում՝ մինչև 20.08.2025թ.: Պայմանագրով սահմանված ժամկետում Ապրանքը Վաճառողի կողմից չի մատակարարվել Գնորդին, Ապրանքից միայն 230 հատ համակարգչային մոնիտորները մատակարարվել է միայն 23.10.2025թ., այսինքն շուրջ երկու ամիս ուշացումով, իսկ 35 հատ դյուրակիր համակարգիչներն առհասարակ չեն մատակարարվել: ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում պարզ է դարձել, որ Վաճառողի կողմից ուշացումով մատակարարված 230 հատ համակարգչային մոնիտորները չեն համապատասխանում Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրերին, ինչով պայմանավորված 29.10.2025թ. N 12/7-2104 գրությամբ Գնորդին՝ «ՎԻ ԷՍ ՏԻ ՍՔԱՅ» ՍՊ ընկերությանը, ՀՀ ազգային անվտանգության ծառայության՝ Վաճառողի, կողմից տրվել է ողջամիտ ժամկետ՝ մինչև 2025թ. նոյեմբերի 3-ը ներառյալ՝ 23.10.2025թ. մատակարարված անպատշաճ որակի (Պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող) 230 հատ համակարգչային մոնիտորները Պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին համապատասխանող համակարգչային մոնիտորներով անհատույց փոխարինելու, ինչպես նաև 35 հատ դյուրակիր համակարգիչները մատակարարելու համար: Վաճառողի կողմից տրված վերոհիշյալ ողջամիտ ժամկետում ևս Գնորդին Պայմանագրի տեխնիկական բնութագրերին համապատասխանող Ապրանքը չի մատակարարվել, ուստի ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը 10.11.2025թ. N 12/7-2202 գրությամբ Վաճառողին հետ է վերադարձրել վերջինիս կողմից ՀՀ ազգային անվտանգության ծառայությանն ուղարկված հանձնման-ընդունման արձանագրությունը՝ բացասական եզրակացությամբ:

Հատկանշական է այն հանգամանքը, որ առ այսօր, Վաճառողի կողմից չեն իրականացվել Պայմանագրով ստանձնած պարտավորությունները և չի մատակարարվել Պայմանագրով նախատեսված Ապրանքը՝ 230 հատ համակարգչային մոնիտորները և 35 հատ դյուրակիր համակարգիչները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան: Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը, իսկ Օրենսգրքի 409-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտավորությունը խախտած պարտապանը պարտավոր է հատուցել պարտատիրոջը պատճառած վնասները:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ձեր կողմից ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը մատակարարվել է անպատշաճ որակի որոշ ապրանք, որը չի փոխարինվել ՀՀ ազգային անվտանգության ծառայության համար ընդունելի ժամկետում, իսկ Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են շուրջ երկու ամսից ավելի ժամկետով, ուստի հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «ա» և «բ» ենթակետերը և 8.11 կետը՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը միակողմանի լուծում է 10.07.2025 թվականին կնքված N «ՀՀ ԱԱԾ-ՏԱԼԿԿԳՎ-ԷԱՃԱՊՁԲ-25/1-ՀՑՀՍ-3» ծածկագրով պայմանագիրը՝ Վաճառողի կողմից Պայմանագիրն էականորեն խախտելու պատճառով:

«Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ **մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին**

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, **որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տեղեկացնում ենք, որ եթե լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարում է պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշում չի կայացնում և չի ներկայացնում լիազորված մարմին:

Բացի այդ, «ՎԻ ԷՍ ՏԻ ԱՔԱՅ» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին Պայմանագրի 6.2 և 6.3 կետերի համաձայն փոխանցել 770,164.13 (յոթ հարյուր յոթանասուն հազար մեկ հարյուր վաթսունչորս դրամ տասներեք լումա) ՀՀ դրամ՝ որպես տույժ և տուգանք:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պայմանագրի կատարման ապահովման և պայմանագրի որակավորման ապահովման գումարները, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում, ամբողջությամբ վճարվելու դեպքում, այդ մասին անհրաժեշտ է գրավոր տեղեկացնել ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը՝ կցելով վճարումը հավաստող փաստաթուղթը (անդորրագրի բնօրինակը):

Տեղեկացնում ենք, որ եթե «ՎԻ ԷՍ ՏԻ ԱՔԱՅ» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ 08430756, գործունեության հասցե՝ Գեղարքունիքի մարզ, գ. Աստղաձոր 24 փ., տ. 1) կողմից վճարման ենթակա գումարները (պայմանագրի կատարման ապահովման գումարը՝ 2,585,600 (երկու միլիոն հինգ հարյուր ութսունհինգ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ և որակավորման ապահովման գումարը՝ 3,878,400 (երեք միլիոն ութ հարյուր յոթանասունութ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ փոխանցվեն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված 900005000758 գանձապետական հաշվեհամարին, ապա Ընկերության նկատմամբ չեն կիրառվի «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 2-րդ մասով նախատեսված՝ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու վերաբերյալ համապատասխան գործողություններ:

Ա. Հակոբյան